«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

ԳԵՂԵՑԻԿԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՍՈՎՈՐՈՂԻ ՄՈՏ

ԱՌԱՐԿԱ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿ

ԱՐՏԱԿ ԴԱՎԹՅԱՆ

ՄԱՐԶ

ԱՐԱԳԱԾՈՏՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

ԱՊԱՐԱՆԻ ՖԻԶՄԱԹ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն----------2

ԳԼՈՒԽ Ա

ԳԵՂԵՑԻԿԻ ՁԵԱՎՈՐՈՒՄՆ ՍՈՎՈՐՈՂԻ ՄՈՏ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

2. Իդեալը որպես գեղեցիկի ձևավորման մաս ----------3

3.Ոճ----------5

4.Ճաշակը որպես գեղեցիկի ձևավորման մասնիկ----------5

ԳԼՈՒԽ Բ

ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՂԵՑԻԿԻ ՁԵԱՎՈՐՄՆ ԳՈՐԾՈՒՄ ՍՈՎՈՐՈՂԻ ՄՈՏ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

5. Բարոյականությունը ու գեղեցիկը----------7

6. Բարին ու չարը սովորողի կյանքում----------8

7.Պարտքը ու պատրաստակամությունը սովորողի դաստիարակության գործում----------9

8. Խղճի և ամոթի զգացողությունը սովորողի մոտ ----------10

9. Ինչքան գեղեցիկ է, երբ մարդիկ երջանիկ են----------10

10. Էգոիզմ և ալտրուիզմ----------11

11. Ազատությունը սովորողի կյանքում---------- ----------12

12. Առաքինությունների ձևավորումը սովորողի մոտ----------13

13. Խրախուսումը և պատիժը սովորողի դաստիարակության պարտադիր պայման----------14

14.Եզրակացություններ և առաջարկություն----------17

15.Օգտագործված գրականություն----------18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գեղեցիկ է այն ամենը, ինչ մեզ գեղագիտական ապրում է պատճառում: Սա անհատական զգացողություն է և չի կարելի որոշակիորեն սահմանել: Գեղեցիկի գեղարվեստական ապրումի ձևակերպումն արվեստն է:

Ե.Քոչար

Գեղեցիկը, մեր կյանքում դրսևորվող գեղագիտական բարձրագույն արժեք է: Գեղեցիկի մեկնաբանումները միշտ եղել են փիլիսոփայական և բուն գեղագիտական շահերի, նախասիրությունների բախման առարկա: Մենք մեր կյանքի ընթացքում մեր շրջապատում հանդիպում ենք լավ կամ վատ արարքների, գեղեցիկ կամ տգեղ երևույթների: Մտածում ենք. գեղեցի՞կ է արդյոք:

Գեղեցիկը, ծագում է սուբյեկտի իդեալական պատկերացումների ու գնահատվող երևույթի մեջ:

Հին ժամանակից որոնել են «Իսկ ի՞նչ է գեղեցիկը» . հնարավոր չէ պատասխանել այդ հարցին մեկ նախադասությամբ: Տարբեր իմաստասերներ այդ հարցին պատասխանել են տարբեր ձևով. Սոկրատեսը գտնում էր, որ գեղեցիկը՝ օգտակարն ու նպատակահարմարն է, իսկ Արիստոտելը՝ չափավորը ու կարգավորվածը:

Նպատակը՝

Ուսուցիչի նպատակն է սովորողին սովորեցնել գեղեցիկը ընկալելու և գնահատելու արվեստը: Օրինակ մարդկանց արտաքին տեսքը , սովորողների վարվելակերպը միմյանց հանդեպ, հարգանք մեծերի հանդեպ, ունենան գեղեցիկ շարժուձև, կարողանան իրենց ճիշտ դրսևորել միջավայրում, ծանոթ լինեն արվեստի գործերին և բազմազան այլ երևույթներ:

Ուսուցչի նպատակն է (ծնողի հետ համագործակցելով) սովորողի մեջ ձևավորել գեղեցիկի իր պատկերացումը և կարող է շատ արագ դատողություններ անել տարբեր երևույթների ու իրադարձությունների մասին: Օրինակ «Ի՜նչ գեղեցիկ երեխա է», «Ի՜նչ գեղեցիկ զգեստ է հագել», «Գերազանցիկ աշակերտ է»,«Ապարանը գեղեցկացել է» և այլն:

Ներկա ժամանակաշրջանում ուսուցիչի դերը սովորողի մեջ վերը նշված գաղափարախոսությունը ճիշտ ներկայացնելն ու սերմանելն է: Ուսուցչի օգնությամբ, սովորողը բացահայտելով իր համար գեղեցիկն ու տգեղը, լավն ու վատը, չարն ու բարին կկարողանա հաղթահարել և դիմակայել կյանքի փորձություններին: Մենք պետք է օգնենք

սովորողին, որ նա կատարելագործվի, նրա մեջ ձևավորենք կամք, որպեսզի նա հասնի իր երազանքին: Եվ ցանկացած իրավիճակներից դուրս գալու համար ճիշտ որոշումներ կայացնի:

Խնդիրները՝

Ներկայացնել գեղեցիկի դերը ու նշանակությունը սովորողի կյանքում .այլապես սովորողը ,չհասկանալով գեղեցիկի նշանակությունը,չի յուրացնի թեման և չի կարող կազմակերպել իր ապագա անելիքները:

Ուսուցչի խնդիրն է սովորողին գիտելիք չտալ պատրաստի ձևով, այլ նախապատրաստել և հանձնարարել սովորողին, որ դրանք ձեռք բերի ինքնուրույն՝ որոնողական , հետազոտական, համագործակցային աշխատանքի միջոցով և ներկայացնի ուսուցչին: Ինքնուրույն գործունեությունը զարգացնում է համագործակցային ուսուցումը, որոնողական աշխատանքները, ինքնագնահատման կարողությունների զարգացումը:

Ուսուցչի խնդիրն է համագործակցել ծնողի հետ, սովորողի մոտ գեղագիտական ընդունակությունների զարգացման գործում, սովորողի գեղեցիկի ընկալման գործում:

Ոսուցչի խնդիրն է վերլուծել և հասկանալ ընտանիքի ազդեցությունը երեխայի գեղագիտական դաստիարկության գործում,որպեսզի կարողանա ճիշտ մոտեցում ցույց տալ սովորողի գեղեցիկի ընկալաման գործում :

Ուսուցչի խնդիրն է որ սովորողը կարողանա իր գիտելիքները կիրառել իրականությոն մեջ:

ԳԼՈՒԽ Ա

ԳԵՂԵՑԻԿԻ ՁԵԱՎՈՐՈՒՄՆ ՍՈՎՈՐՈՂԻ ՄՈՏ

ԻԴԵԱԼԸ ՈՐՊԵՍ ԳԵՂԵՑԻԿԻ ՁԵՎԱՎՈՐՄՆ ՄԱՍ

« Մարդն է բոլոր իրերի չափանիշը»

Պրոտագորաս

Ուսուցիչը,սովորողի մեջ ձևավորելով գեղեցիկը ,կնպաստի ,որ սովորողը իր իդեալը ճիշտ ու գեղեցիկ կառուցի: Յուրացնելով իդեալը `կկարողանա ճիշտ պատկերացում կազմել կատարյալի ներդաշնակի  մասին,որին մենք ձգտում ենք և կփորձի գեղեցիկ ապրել իրական կյանքում `նմանվելով իր իդեալին :

Իդեալը մարդու (մարդկային խմբի, հասարակության) պատկերացումն է կատարյալի մասին, բարձրագույն նպատակ, որին մենք ձգտում ենք:

Մենք ունենք գեղագիտական իդեալ, գեղեցիկի, ներդաշնակության և, ընդհանրապես, գեղագիտական արժեքների մեջ էլ դրսևորվում է գեղագիտական իդեալը:

Եվ մենք պետք է օգնենք սովորողին, որ նրա մեջ ձևավորենք կամք , որպեսզի նա նմանվի իր իդեալին: Իդեալին հասնելը անհնար է, բայց բոլորը ձգտում են հասնել դրան:

Իդեալի ձևավորումը սովորողի գոյության տարբեր փուլերում կատարվում է տարբեր ձևով: Օրինակ երիտասարդների իդեալը գեղեցիկ մարմնի ձև ունեցող մարդն է, իսկ հասուն տարիքի անձանց պատկերացմամբ իդեալը կարող է լինել ինքնարտահայտված, ինքն իրեն գտած անհատը՝ անկախ արտաքին տեսքից: Ըստ իմաստասերների իդեալներ չունեցող մարդը վտանգավոր կարող է լինել հասարակության համար:

Յուրաքանչյուր դարաշրջան ունի կատարյալի և կատարելատիպի իր ընդհանրական ընկալումը: Անտիկ շրջանում իդեալը մարմնավորվում էր հունական աստվածների մեջ: Վերածննդի դարաշրջանում առաջին պլան մղվեց գեղեցիկի իդեալը, որի կենտրոնում մարդն էր: Բուրժուական ժամանակաշրջանում առաջ քաշեցին ազատության, դրամ աշխատելու կարողության իդեալները: Սոցիալիզմը առաջադրեց հավասարություն, որի հիմքում աշխատանքն էր: Ժամանակակից հասարակության իդեալը բիզնեսն է: Չկա մեկ ընդհանուր գեղագիտական իդեալ մարդկության պատմության ապրած բոլոր դարաշրջանների համար:

Յուրաքնչյուր մշակույթին բնորոշ է գեղեցիկի սեփական իդեալը, որի հիմքում ընկած են տվյալ ժողովրդի ավանդույթները, սովորությունները, ազգային մտածելակերպը և այլն: Ներկայումս մարդկությունը ապրում է գլոբալացման դարաշրջանում , որտեղ ավելի սերտ են դառնում տարբեր երկրների մշակույթների միախառնումը, մարդկանց շփումը,որն էլ իր հերթին իր հետ բերում է գեղեցիկի ընկալման նոր ձևեր ու մոտեցումներ:

ՈՃ

Միակ հատկանիշը, որը պետք է
ձեռք բերել ոճի մեջ՝ պարզությունն է:
Ստենդալ

Ուսուցիչը սովորողի մեջ պետք է դաստիարակի գեղեցիկը ,որ սովորողի մոտ ձևավորվի գեղագիտական ոճ: Ոճն էլ ձևավորում է իդեալը : Սովորողի մոտ գեղագիտական ոճ կամ ճաշակ ձևավորելու համար ուսուցիչը պետք է սովորողին ծանոթացնի համաշխարհային գրականությանը , դասական երաժշտությանը , այցելություններ թանգարան և այլն :

Ոճն այն ձևն է, որով արվեստագետը նյութականացնում է իր հոգում եղածը: Ոճն ունի բովանդակային և ձևական կողմեր: Բովանդակային կողմն այն է, թե ինչպիսի բովանդակություն է ընտրում հեղինակն իր իդեալը մեզ հասցնելու համար: Օրինակ՝ պատկերելով բնության ահեղ երևույթ՝ փոթորիկ ծովի վրա՝ Հովհաննես Այվազովսկին պատկերել է ազատ մարդու իր իդեալը. նույն բանը նա կարող էր անել նաև այլ բովանդակության ներկայացմամբ: Ոճի ձևական կողմն իրականանում է գույների, տարածական ձևերի, բառապաշարի և այլ հանգամանքների ընտրությամբ, որոնք բառի բուն իմաստով ձևավորում են իդեալը: Օրինակ Արշիլ Գորկին «Նկարիչն ու իր մայրը» կտավում, ձգտելով ցույց տալ կորցրած երջանկության կարոտախտն ու ցավը, չի պատկերել մոր ձեռքերն ամբողջությամբ դրանց փոխարեն սպիտակ ներկաբիծ թողնելով: Կարող է լինել նաև խոսելու , շփվելու,մտածելու ոճ և այլն, որը բնորոշ է բոլորիս: Ոճը հնարավորություն է տալիս ընկալողին ներկայացնելու իր գեղագիտական ճաշակը:

ՃԱՇԱԿ ՈՐՊԵՍ ԳԵՂԵՑԻԿԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԱՄՆԻԿ

Ճաշակի շնորհիվ մենք կարողանում ենք գեղեցիկը, վեհը, ներդաշնակը զանազանել ոչ գեղեցիկից: Եվ մեր խնդիրն է սովորողն տալ գեղագիտական դաստիարակություն , որի արդյունքում սովորողի մոտ կձևավորվի գեղագիտական ճաշակ:

Սովորողը (ուսուցչի և ծնողի հսկողությամբ) պետք է ունենա հնարավորություն՝ ձևավորելու նուրբ ճաշակ, քանի որ կարող է շփվել մարդկային մշակույթի ողջ գանձարանի հետ: Թանգարանները, ցուցահանդեսները, գրքերն և արվեստի այլ տեսակները հասանելի է մեզ: Եվ ուսուցչի պարտականությունն է , թույլ չտալ որ սովորողը մետենա ցածրաճաշակ, էժան, արվեստի գործերին, որը տարածվում է հեռուստացույցի միջոցով, այլ սովորողին

ծանոթացնի մարդկության կողմից ստեղծված բարձրագույն արժեքներին, որը առկա է մշակութային կյանքի բազմաթիվ ոլորտներում:

ԳԼՈՒԽ Բ

ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՂԵՑԻԿԻ ՁԵԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՍՈՎՈՐՈՂԻ ՄՈՏ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԵՂԵՑԻԿԸ

«Վարվիր ուրիշի հետ այնպես, ինչպես
Կուզեիր, որ քեզ հետ վարվեին»

Սովորողը պետք է հասկանա որ գեղեցիկ ապրելու համար պետք է պահպանել բարոյական նորմերը, Պահպանելով բարոյական նորմերը նա նաև հարգանք կվայելի հասարակության մեջ:

Առանց բարոյական նորմերի հասարակությունում կլինի անարխիա, քանի որ, հենց հանրությունն է ստեղծում բարոյական նորմերը: Իմ կարծիքով բարոյական նորմերը պետք է մնան, քանի որ, դրա շնորհիվ մենք կարող ենք մարդ լինել և կրթված հասարակություն ստեղծել:

Բարոյականությունը ուսումնասիրելիս սովորողը կիմանա բարու և չարի, ճշտի և սխալի, առաքինության և արատի, արդարության մասին:

Սովորողը կարող է զգալիորեն ինքնուրույն կերպով,բայց ծնողի կամ ուսուցչի վերահսկողությամբ կարգավորել իր վարքը և դատել իր շուրջը տեղի ունեցող ամեն ինչի մասին:

Բարոյագիտության մեջ տարբերակում են երեք հիմնարար հասկացություններ.

1.Բարոյական նշանակում է բարի, լավ:

2.Անբարոյական նշանակում է չար, վատ:

3. Ոչ բարոյական՝ նշանակում է բարոյական հարթությունից դուրս օրինակ մաթեմատի - կական բանաձևերը,մեքենաները և այլն: Բայց մարդիկ կարող են դրանք օգտագործել լավ կամ վատ արարքների համար:Ըստ Վիտգենշտեյնի մարդկանց բարոյական կերպարի մասին պետք է դատել ոչ թե նրանց խոսքով, այլ արարքներով :Նա կարծում էր մարդու բարոյական կերպարը երևում էր նրա արարքներից:

Մարդկանց արարքները կարգավորվում են նաև իրավական նորմերով: Փորձենք հասկանալ բարոյականության և իրավունքի տարբերությունը, իրավունքը, հասարակական հարաբերությունները կարգավորում է օրենքի ուժով,իսկ բարոյականությունը, հասարակական հարաբերությունները կարգավորում է համոզմունքների գործողությունների

միջոցով: Բարոյականությունը հենվում է մարդկանց խղճի և հասարակական կարծիքի վրա: Կարելի է ասել, եթե իրավական նորմերը հիմնվում են ուժի հեղինակության վրա , ապա բարոյական նորմերը հեղինակության ուժի վրա:

Բարոյագիտության տեսությունները փորձում են պատասխանել «Ինչ է նշանակում լինել բարոյական»: Ըստ Արիստոտելի առաքինի մարդը սպանություն չի գործում ոչ թե նրա համար ,որ գոյություն ունի «մի ՛ սպանիր» բարոյական նորմը, այլ որովհետև ինքը ընդունակ չէ սպանելու: Ըստ Ի. Կանտի բարոյական պարտքի տեսության՝ «Գործիր միայն այն նորմի համաձայն, որով առաջնորդվելիս միաժամանակ կուզեիր, որ այն դառնա համընդհանուր օրենք»:

ԲԱՐԻՆ ՈՒ ՉԱՐԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԿՅԱՆՔՈՒՄ

Որքան մարդը բարի է, այնքան ավելի
շատ է ուրիշների մեջ բարություն տեսնում:
Բլեզ Պասկալ

Բարին մենք կարող ենք համարել գեղեցիկ(բարոյական), իսկ չարը(անբարոյական) տգեղ: Ուսուցչի դերը կայանում է նրանում,որ սովորողին տեղեկացնի չարի և բարու ու նրանց հավերժ պայքարի մասին: Սովորողը պետք է գաղափար կազմի չարի ու բարու մասին, որպեսզի կյանքի ընթացքում քիչ սխալներ թույլ տա:

Բարին և չարը ծագում են հասարակական պրակտիկայում, որպես սուբյեկտների հարաբերություններ: Բարին այն է, ինչը հասարակությունը համարում է բարոյական, դրական, պատշաճ, արտահայտում է հասարակության զարգացման պահանջմունքները, նպաստում ու խթանում է դրան և արժանի է օրինակման: Չարը հասարակական զարգացմանը հակադիր բացասական արարքներն ու երևույթներն են, որոնք չի ընդունում հասարակությունը, համարում է անբարոյական և դատապարտում է: Չնայած, որ բարին լավն է, իսկ չարը՝ վատը, սակայն այս երկու հատկանիշները չեն կարող գոյություն ունենալ առանց մեկը մյուսի: Պատկերացնենք՝ չարը որպես երևույթ, անհետանում է աշխարհից. ոչ ոք “չար” չեն, բոլորը անում են միայն “բարի” գործեր: Այդ դեպքում իմաստից զրկվում է բարությունը, քանի որ հակադրություն չի լինում: Այն գործը, որը “չարի” գոյության ժամանակ որակավորվում էր որպես “բարի”, “չարի” անհետանալու դեպքում կորցնում է այդ հատկությունը: Մենք մոտավորապես գիտենք չարը ինչ է, ստացվում է՝ բարին դրա հակառակն է: Եթե մենք այլևս չիմանանք չարության իմաստը, մենք չենք կարողանա գտնել և ընկալել բարությունը: Ինչքան ուժեղ և վնասակար է չարը, այնքան էլ ուժեղ է բարին:

Բարի և չար հասկացությունները շատ հարաբերական են: Բարու և չարի գաղափարները կառուցվում են մարդու սուբյեկտիվ և անձնական փորձով պայմանավորված: Պատմությունը և անթիվ օրինակները ցույց են տալիս, որ իրական աշխարհում գոյություն չունի միանշանակ վատը և միանշանակ լավը: Դա հանդիպում է միայն գրականությունում, առավել ևս՝ մանկական հեքիաթներում: Քանի որ երեխան՝ մեծանալով դպրոց հաճախելով ավելի շատ է հասկանում աշխարհակարգը, և սովորողը պետք է գաղափար կազմի լավ ու վատի մասին, որպեսզի կարողանա ունենա սեփական կարծիք:

ՊԱՐՏՔԸ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Սովորողի մոտ պետք է դաստիարակել պարտքի և պատասխանատվություն զգացում: Եթե ուզում ենք սովորողից կերտել լիարժեք քաղաքացի, ապա պետք է նրա մեջ դաստիարակենք պարտքի զգացում և նա պատասխանատվություն պետք է կրի իր բոլոր արարքների համար: Բարոյական արժեքներին հետևելը մարդու(սովորողի) պարտքն է: Պարտքը բարոյագիտության հիմնական հասկացություններից է: Պարտքը բաժանում ենք «պարտականություն» և «պարտավորություն» հասկացությունների: Պարտականությունը վարքագծի տեսակ է, որը սահմանվում է պետության կողմից և նպատակ ունի երաշխավորելու այլ մարդկանց իրավունքները:Քանի որ պարտքն անհրաժեշտություն է, ապա այն ենթակա է կատարման, եթե նույնիսկ չի համընկնում մեր ցանկությունների, քմահաճույքների հետ: Պարտքը բարոյական բովանդակություն է ստանում այն դեպքում, երբ դրա կատարումը կամավոր է, այլ ոչ պարտադրված: Մենք պարտք ունենք մեր ծնողների, հարազատների, ընկերների,, բարեկամների առջև: Մարդը պարտք ունի ոչ միայն ներկայի, այլև անցյալի և ապագայի հանդեպ:Պարտքի հասկացությունն առանցքային դեր ունի Էմանուիլ Կանտի տեսության մեջ: Ըստ Կանտի՝ յուրաքանչյուր մարդ ունի ինչ-որ բաներ անելու հակումներ, ցանկություններ: Կանտի տեսության մեջ բարոյականությունը և պարտքը նույնականացված են: Եթե մարդը չի զգում պատասխանատվություն, ապա այդ մարդը անկայուն է և նա իր կյանքում հաջողությունների չի հասնի:

ԽԻՂՃԸ ԵՎ ԱՄՈԹԸ ՍՈՎՈՐՈՂԻ ՄՈՏ ԳԵՂԵՑԻԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

«Ոչ մի վատ բան մի՛ խոսիր կամ
արա, նույնիսկ եթե միայնակ ես»
Դեմոկրիտ

Ինչքան գեղեցիկ հոգի ունեն այն մարդիկ, որոնք ունեն խիղճ և ամոթ: Ուսուցիչը պետք է կարողանա սովորողին ուղղություն ցույց տալ կամ դաստիարակել ,որպեսզի սովորողը ունենա խիղճ և ամոթ Եվ ձեռք բերելով այդ գեղեցիկ հատկանիշները ՝նա կդառնա կատարելության մի մասնիկ և հասարակության հարգարժան անդամ:

Խիղճը մարդու կարողությունն է՝ քննադատորեն դիտարկելու իր արարքները, մտքերը, ցանկությունները: Խիղճը մեր ներքին դատավորն է : Խրիմյան հայրիկը խղճի մասին ասել է.- «Խիղճը հաշվեպահպան ոստիկան է, որն իբրև դատավոր սրտի աթոռի վրա բազմած խայթարում է միշտ»: Ինչպես պարտքը ,այնպես էլ խիղճը կախված չէ ուրիշի կարծիքից: դրանով է խիղճը տարբերվում ամոթից : Ամոթն հիմնված է ուրիշի կարծիքի վրա: Սենեկան ամոթի մասին ասել է.- «Ամոթն արգելում է այն, ինչ արգելված չէ օրենքով»:Խիղճը մարդու երկրորդ եսն է: Գերմանացի փիլիսոփա Կանտը խիղճը համարում է մեր մեջ ապրող օրենք: Խիղճը փոխկապակցված է պարտքի զգացման հետ: Խիղճը կապված է ոչ թե այլ մարդկանց կարծիքի, այլ պարտքի հետ: Շատ հաճախ խիղճը համարվում է մարդու երկրորդ ես-ը: Շատ բարոյագետներ կարծում են, թե խղճով մարդը ձգտում է ինքնակատարելագործման և իր առջև նորանոր պահանջներ դնում:

ԻՆՉՔԱՆ ԳԵՂԵՑԻԿ Է ,ԵՐԲ ՄԱՐԴԻԿ ԵՐՋԱՆԻԿ ԵՆ

Մի վազիր երջանկության հետևից.
այն միշտ գտնվում է քո ներսում:
Պյութագորաս

Երջանկության հասնելու համար նախ պետք է ունենաս նպատակ և հասնես այդ նպատակին: Մարդը չի կարող լիովին երջանիկ լինել, որովհետև նա ունի կորուստներ(հարազատի կորուստ): Կան երջանիկ պահեր և ձեր կյանքում ինչքն շատ են երջանիկ պահերը ուրեմ համարեք որ դուք հաջողակ մարդ եք:

Ի՞նչ է երջանկությունը երջանկությունը դրական զգացմունքային վիճակ է, որը բնորոշվում է հաճելի էմոցիաներով, որոնք էլ իրենց հերթին առաջացնում են բավարարվածության ուրախ վիճակ:Երջանկությունը պատասխան է այն հարցին, թե մարդն ինչին պետք է ձգտի: Երջանիկ լինելը կյանքի գերգույն նպատակն է : Կա երկու մոտեցում երջանկության մասին

Առաջին՝ երջանկությունը ճակատագրի նվերն է, հաջողություն, պատահականություն:

Երկրորդ՝ երջանկությունը ամբողջությամբ կախված է մարդուց, նրա բնավորությունից կամքից և ձգտումից: Որոշ հասարակագետների կարծիքով՝ երջանկությունը չպետք է

ընկալել որպես կյանքից բացարձակ բավարարվածության զգացում: Եթե մարդն ունենա բացարձակ բավարարվածության զգացում, ապա այլևս ոչինչ չի անի: Նոր բարձունքների և նվաճումների հավերժ ձգտելու զգացումն է երջանկությունը: Մարդու առանձնահատկությունն այն է, որ նա երբեք չի բավարարվում ձեռք բերածով: Մարդկային երջանկությունը հակասական է: Այն ներառում է ինչպես բավարարվածություն, այնպես էլ անբավարարվածության, նոր նվաճումների ձգտելու զգացումները: Երջանկությունը բավարավածության և անբավարարվածության զգացումների շարունակական հերթափոխում է: Երջանկությունը չպետք է լինի եսասիրական: Հենց այս գործոններն են կարևոր բարոյականության տեսակետից: Բարոյական մարդը չի կարող երջանիկ զգալ, երբ իր շրջապատում շատերը դժբախտ են: Կա նաև տեսակետ, որ մարդն ինչքան քիչ մտածի երջանիկ լինելու մասին, այնքան ավելի երջանիկ կլինի: Եվ հակառակը, որքան մարդն ավելի շատ ձգտի երջանկության, այնքան ավելի դժվար կլինի երջանկության հասնելը:

ԷԳՈԻԶՄ ԵՎ ԱԼՏՐՈՒԻԶՄ

Էգոիզմ տերմինը կոչվում է նաև եսասիրություն, եսապաշտություն: Էգոիզմը՝ սեփական շահերին հետամուտ լինելը, դիտարկվում է որպես բարիք : Յուրաքանչյուր ոք պետք է ձգտի բավարարել իր շահերը՝ անտեսելով ուրիշի կամ ընդհանուր շահերը:Իսկ էգոիզմը հակադրում է ալտրուիզմը: Ալտրուիստները հոգ են տանում ուրիշների քան իրենց մասին: Էգոիզմը և ալտրուիզմը դրանք երկու ծայրահեղություններ են: Էգոիզմը պատկանում է եսասեր լինելու որակին, Իսկ ալտրուիզմը վերաբերում է ամբողջովին անձնազոհ լինելու որակին: Բարոյագիտության տեսանկյունից էգոիզմը բացասական դիրքորոշում է, իսկ ալտրուիզմը՝ դրական:

Բարոյագիտության մեջ կա էգոիզմի երեք ընկալում.

1.Բոլորը պետք է ծառայեն իմ շահերին

2.բոլորը պետք է առաջնորդվեն բարոյական նորմերով, բացի ինձնից:

3.Բոլոր մարդիկ պետք է հետամուտ լինեն իրենց շահերի իրագործմանը:

Այստեղ առաջին և երկրորդ ընկալումը դեմ է բարոյականության ոսկե կանոնին և մարդասիրության սկզբունքներին:

Ալտրուիզմը նշանակում է ուրիշի մասին ավելի շատ հոգ տանել, քան սեփական անձի: Ալտրուիզմը կարող է սահմանվել որպես «անշահախնդրություն», «ինքնազոհաբերում», «անձնազոհություն»: Ալտրուիզմը հոգատարությունն է այլ անձանց բարեկեցության կամ շահերի համար:

Չափավոր ալտրուիստի կանոնն է «Վարվի՛ր այնպես, որ քո անձնական շահը ծառայի ուրիշի շահին»

Էգոիզմի և ալտրուիզմի միջև տարբերությունն է.

• Էգոիստը առաջին տեղում է դնում իր շահերը, մինչդեռ ալտրուիստը իր շահերրը անտեսում է

• Այս երկուսը կարելի է համարել մարդու որակի երկու ծայրահեղություն:

• Կարող են լավ ընկերներ լինել

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԿՅԱՆՔՈՒՄ

Ազատությունն այն չէ, ինչ ուզում ես
անել, այլ չանել այն, ինչ չես ուզում:
«Ժան-Ժակ Ռուսո»

Ազատաությունը գեղեցիկ կյանքի , սիրո,ազատ խոսքի ազատությունն է: Սովորողը պետք է սովորի և դաստիարակվի ազատության ոգով, որպեսզի ոչ մի ազգ չկարողանա բռնանալ նրա կամքին, մենք պետք է այնպես ուսուցանեք և դաստիարակենք մեր սովորողներին, որպեսզի նրանք միշտ ձգտեն ազատության, չհանդուրժեն ոչ մի թշնամու և ամուր լինեն մեր լեռների պես:

Յուրաքանչյուր մարդ ունի իր սեփական ազատության սահմանը և այն վերջանում է այնտեղ, որտեղից սկսվում է ուրիշի իրավունքը :

Յուրաքանչյուր ոք ունի խոսելու, արտահայտվելու, շարժվելու իրավունք: Փիլիսոփաները մշտապես բանավիճել են այն հարցի շուրջը, թե արդյոք մարդն ազատ է իր գործողություններում:

Առաջին- մարդը ենթարկվում է բնության օրենքներին

երկրորդ - մարդը ենթարկվում է հասարակական նորմերին

երրորդ -մարդը ենթարկվում է իրավական նորմերին:Այսքանով հանդերձ մարդը կարո՞ղ է ազատ լինել:Մի շարք փիլիսոփաներ կարծում են, որ այս աշխարհում ամեն ինչ ունի իր պատճառները: Եվ այդ պատճառները անհատից դուրս են և մենք չենք կարող անհատից պահանջել որոշակի վարքագիծ, որովհետև մարդը չունի կամքի ազատություն և մենք չենք կարող մարդուց պահանջել բարոյական պատասխանատվություն:

Իսկ իրենց հակառակորդները պնդում են, որ կան բաներ ,որոնք անելու կամ չանելու հարցում մարդն ազատ է : Այսինքն ազատ լինել նշանակում է ոչ թե անել այն ամենը, ինչ ուզում ես, այլ անել այն, քանի դեռ չես ոտնահարել ուրիշի ազատությունը: Յուրաքանչյուր մարդ պետք է

ազատ լինի իր ընտրության մեջ և կատարի իր օրինական ցանկությունները։ Եթե անձին տրվում է ազատություն, ապա նա պարտավոր է կրել նաև պատասխանատվություն։ Չի կարելի ապրել բաձարձակ ազատ։ Եթե դա իրականություն լիներ, ապա աշխարհում քաոս կտիրեր, և մարդիկ կդառնային անկառավարելի։Այդ իսկ պատճառով կան որոշակի սահմանափակումներ որպեսզի մադիկ չոտնահարեն ուրիշի իրավունքները։

ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵԱՎՈՐՈՒՄԸ ՍՈՎՈՐՈՂԻ ՄՈՏ

«Կատարյալ առաքինությունը
սեփական չափն իմանալն է»
Մատթեոս Զուղայեցի

Սովորողը եթե ուզում է կատարելագործվել , պետք է կարողանա պայքարել գայթակղությունների ինչպես նաև մահացու մեղքերի դեմ։

Առաքինությունը հունարենից թարգմանաբար նշանակում է կատարյալ։Առաքինություն բառը օգտագործվում է երկու իմաստով.

Առաջին, երբ առաքինությունն օգտագործում են եզակի թվով ,ապա այն ընկալվում է որպես բարոյական հասկացության հոմանիշ։

Երկրորդ, երբ առաքինություն բառը օգտագործում ենք հոգնակի թվով , ապա նկատի ենք ունենում մարդուն բնորոշ դրական հատկանիշ։Առաքինությունները սովորական հատկանիշներ չեն ,մարդը ինքը պետք է ուզենա գործելու բարոյական սկզբունքներով։ Առաքինությունները բաժանում են մտքի և բնավորության ։Մտքի առաքինությունները համարվում են սովորելու արդյունք, իսկ բնավորության առաքինությունները սովորույթի, վարքագծի։

Առաքինությունները լինում են հիմնարար և աստվածաբանական, որոնք հակադրվում են յոթ մահացու մեղքերին.

- Ողջախոհություն
- Քաջություն
- Արդարություն
- Չափավորություն
- Հավատ
- Հույս
- Սեր

- Ավելի ուշ հայտնվեց առաքինությունների մեկ այլ ցուցակ՝ կազմված յոթ հիմնական մեղքերի հակապատկերներից.

- Կուսություն
- Չափավորություն
- Սեր
- Ջանք
- Համբերություն
- Բարություն
- Հնազանդություն

- Ըստ Դավիթ Անհաղթի մարդու հոգին բաժանվում է երեք մասի ՝ բանական, կամային և ցանկական: Դրանցից յուրաքնչյուրն ունի որոշակի առաքինություն,որոնք են՝ խոհա-կանությունը (հոգու բանական մասը),արիությունը (հոգու կամային մասը), ողջախոհությունը (հոգու ցանկական մասը) և արդարությունը (հավասարապես տարածում է հոգու բոլոր մասերի վրա): Մատթեոս Ջուղայեցին առաքինությունները բաժանում էր երեք խմբի՝ ձեռքբերովի, բնածին և ի վերուստ տրված:Ի վերուստ տրված առաքինություններով օժտված են միայն ընտրյալները :

ԽՐԱԽՈՒՍՈՒՄԸ ԵՎ ՊԱՏԻԺԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆ

Երե սովորողը դրական գործողություն է կատարում պետք է խրախուսվի իսկ բացասականի դեպքում պետք է պատժվի: Եվ սովորողը պետք է ընդունի որ իրեն ճիշտ են պատժել կամ խրախուսել: Արդարության ապահովման միջոցներից է խրախուսումը: Կա խրախուսման չորս եղանակ՝

1.հավասարապես. շատ իրավիճակներում մարդկանց հավասար խրախուսելը ցանկալի է, բայց ոչ արդար, քանի որ մարդիկ ի բնե հավասար են:

2.ըստ ընդունակությունների պետք է տարբերակել բնատուր և ձեռքբերովի խրախուսումը: Շատ մարդիկ ունենալով բնատուր ընդունակություններ սահմանափակվում են դրանցով , իսկ ձեռքբերովի ընդունակությունները մարդուց պահանջում են ջանքեր և ժամանակ:

3.Ըստ կարիքների տարբերակվում են մասնավոր և հանրային կարիքները: Օրինակ մասնավոր կարիք է ընտանիքի աղքատությունը, իսկ բժշկի աշխատանքը հանրային կարիք

է: Քանի որ բժշկի ծառայություններից օգտվում է հասարակությունը հետևաբար բժշկին պետք է խրախուսել:

4.Ըստ արժանիքների արժանի լինել նշանակում է շատ ջանք գործադրել: Արժանի լինել նշանակում է ավելի լավ արդյունքի հասնել:

Կա պատիժը ներկայացվող չորս պահանջ.

1.տհաճ

2.հիմնավորված

3.իրավասու անհատի կամ մարմնի կողմից

4. կանոնների և նորմերի համաձայն:

Կա պատժի երկու մոտեցում. Ըստ արժանավույն (պետք է պատժել ըստ նրա կատարած զանցանքի կամ հանցանքի ծանրության) և օգտապաշտական (կարևորում է ոչ թե արժանի պատժի հանգամանքը այլ թե տվյալ պատիժը որքանով կօգնի, որ հետագայում նույն քայլը չկատարի):

Խրախուսանքը և պատիժը համարվում են դաստիարակության ամենակարևոր մեթոդներից: Յուրաքանչյուր արարք լինի դրական թե՛ բացասական չպետք է մնա անարձագանք: Պատիժը կարող է օգնել որոշ դեպքերում ,եթե կիրառվում է խելացի մոտեցմամբ: Ստորև դրված են պատժի ու խրախուսանքի հիմնարար կանոնները.

Պատժի և խրախուսանքի հիմնարար կանոնները

Պատիժը չպետք է վնասի սովորողի հոգեբանական և ֆիզիկական առողջությանը,

Ամեն մի զանցանքի համար՝ մեկ պատիժ,

Սովորողը չպետք է խուճապի ենթարկվի, եթե հասկանում է, որ պատժվելու է

Չի կարելի վիրավորել և ցածրացրացնել սովորողին, կարգավիճակը և ուժը չպետք է օգտագործել նրան նսեմացնելու համար

Երբեք չպատժե՛լ

- խփելով
- անթույլատրելի բառերով վիրավորելով
- ստորացնելով

Պատիժը կարող է փոխարինվել այլ միջոցառումներով՝

- Լինել համբերատար , սա ամենամեծ օգնականն է

- Պետք է հակիրճ բացատրել թե ինչու՞ է իր արաքը սխալ

  Սովորեցնել երեխային գնահատել իր վարքը

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերը գրվածի նպատակն է, որ սովորողը, յուրացնելով այն, կարողանա ինտեգրվել հասարակության մեջ և գեղեցիկ ու օգտակար ապրել հասարակության մեջ իր ուրույն տեղը զբաղեցնել:

Քանի որ մենք գեղեցկությանը ձգտող էակ ենք ապաա ամեն տեղից փորձում ենք վերցնել գեղեցկությունը: Բացի կանոները անգիր անելուց(որը անարդյունք է) սովորողը պետք է կարողանա կիրառել այդ կանոները կյանքում ,որը իմ կարծիքով այդքան էլ լավ չի ստացվում:

Բարոյական նորմերը հնարավորություն են տալիս մարդուն (սովորողին) դրսևորվելու որպես ինքնուրույն էակ: Եթե սովորողը փորձում է ինտեգրվել հասարակության մեջ բարոյական արժեքները պեք է պարտադիր կատարվեն և դրանում պետք է նպաստի ծնողը և ուսուցիչը: Եվ մեր նպատակն է սովորողին ուղղորդելու , որպեսզի սովորողը կարողանա կիրառել բոլոր գեղագիտական և բարոյական նորմերը կյանքում:

Մարդն իր ամբողջ կյանքի ընթացքում պետք է սովորի, կատարելագործվի, որպեսզի կյանքի դժվարություններին կարողանա դիմակայել: Անհատի (սովորողի) կատարելագործումն հնարավոր է բարոյական առաքինությունների միջոցով (հույս, հավատ, սեր, չափավորություն, արիություն, իմաստնություն,արդարություն և այլն): Սովորողը պետք է յուրացնի և կիրառի իդեալը, չարն ու բարին, ոճ, ճաշակ, ազատություն, էգոիզմ և ալտրուիզմ, բարոյականություն և այլն : Նմանվելով իր իդեալին՝ սովորողը կկատարելագոծվի , կկարողանա տարբերակել չարն ու բարին, լավն ու վատը, կիմանա ի՞նչ է երջանկությունը,սերը, ամոթը: Կդառնան պայքարող տեսակ և կպայքարի իր ազատության, անկախության համար, ինչպես նաև կպայքարի անօրենությունների դեմ, կդառնան առաքինի մարդ ,կունենան ոճ և ճաշակ , կունենան պարտքի զգացում և կձևավորվի որպես բարոյական մարդ և պիտանի կլինի հասարակության համար, այդ ժամանակ էլ մենք կհամարենք մեր նպատակի և խնդիրների լուծում: Եվ ո՞վ կարող է ինձ ասել, որ հենց դա չէ բնության մեջ ամենագեղեցիկը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Հասարակագիտության գիրք 10-րդ դասարան էջ 4-7, 41-47, 61-69

2.Թերզյան Թ., Գեղեցկագիտություն, Բազմավեպ, Վերնատուն, 1897, էջ 215-21, 479-84,

3.https://anahitabgaryan.wordpress.com/2019/09/14/%D5%A3%D5%A5%D5%B2%D5%A1%D5%A3%D5%AB%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AB%D5%A4%D5%A5%D5%A1%D5%AC/

4.https://hy.wikipedia.org/wiki/%D4%B2%D5%A1%D6%80%D5%AB%D5%B6_%D6%87_%D5%B9%D5%A1%D6%80%D5%A8_(%D6%83%D5%AB%D5%AC%D5%AB%D5%BD%D5%B8%D6%83%D5%A1%D5%B5%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6)

5.https://shushanblog836729527.wordpress.com/2020/11/26/%D5%A2%D5%A1%D6%80%D5%AB%D5%B6-%D5%B8%D6%82-%D5%B9%D5%A1%D6%80%D5%A8/

6.https://hy.wikipedia.org/wiki/%D4%B5%D6%80%D5%BB%D5%A1%D5%B6%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6

7.https://hy.wikipedia.org/wiki/%D5%85%D5%B8%D5%A9_%D5%A1%D5%BC%D5%A1%D6%84%D5%AB%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80